ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1383-Ա/2 **08.10.2020թ.**

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-19-Ը ՍԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ ԱՌՑԱՆՑ ՁԵՎՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ «ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 32-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-28-Ը ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԱՌՑԱՆՑ ՁԵՎՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 61-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2019թ. հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի N 605-Ա/2 հրամանով հաստատված «Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման կարգի» 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2020 թվականի սեպտեմբերի 13-19-ը Սինգապուրում առցանց ձևով տեղի ունեցած «Ինֆորմատիկա» առարկայի դպրոցականների 32-րդ միջազգային և 2020 թվականի սեպտեմբերի 19-28-ը Սանկտ Պետերբուրգում առցանց ձևով տեղի ունեցած «Մաթեմատիկա» առարկայի դպրոցականների 61-րդ միջազգային օլիմպիադաների եզրափակիչ փուլերին մասնակցած և հաղթած անվանական կրթաթոշակ ստացողների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության աշխատակազմի ֆինասաբյուջետային վարչությանը /պետ՝ Ա.Թադևոսյան/՝ համապատասխան ուսումնական հաստատություններին տրամադրել

ֆինանսական միջոցներ ՀՀ ԿԳՄՍ նախարարի վերոնշյալ հրամանով հաստատված կարգով սահմանված չափով՝ աշակերտներին կրթաթոշակ տրամադրելու համար:

3. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը /պետի տեղակալ՝ Օ.Կամավոսյան/՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի վերոնշյալ հրամանով հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն ապահովել հրամանի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում:
4. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել հանրակրթության վարչությանը /պետի պարտականությունները կատարող՝ Ս. Ազատյան/:
5. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ժ.Անդրեասյանին:

Նախարար **Արայիկ Հարությունյան**

X _____

Հավելված

ՀՀ կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

08.10.2020թ. N **1383-Ա/2** հրամանի

Ցանկ

2020 թվականի սեպտեմբերի 13-19-ը Սինգապուրում առցանց ձևով տեղի ունեցած «Ինֆորմատիկա» առարկայի դպրոցականների 32-րդ միջազգային և 2020 թվականի սեպտեմբերի 19-28-ը Սանկտ Պետերբուրգում առցանց ձևով տեղի ունեցած «Մաթեմատիկա» առարկայի դպրոցականների 61-րդ միջազգային օլիմպիադաների եզրափակիչ փուլերին մասնակցած և հաղթած անվանական կրթաթոշակ ստացողների

հ/հ	**Ազգանուն**	**Անուն**	**Դասարան**	**Առարկան**	**Մարզ**	**Կրթօջախ**	**դիպլոմ**
1.	Կոստանյան	Էմիլ	11	ինֆորմ.	Երևան	Ա.Շահինյանի անվ. Ֆիզմաթ հ/դ	արծաթ
2.	Անդրեասյան	Սամվել	12	ինֆորմ.	Երևան	Քվանտ վարժ.	արծաթ
3.	Խալաթյան	Արայի	10	ինֆորմ.	Երևան	Քվանտ վարժ.	բրոնզ
4.	Աբելյան	Ալեքսանդր	11	ինֆորմ.	Երևան	Քվանտ վարժ.	բրոնզ
5.	Կարագուլյան	Միեր	11	մաթեմ.	Երևան	Ա.Շահինյանի անվ. Ֆիզմաթ հ/դ	արծաթ
6.	Կարապետյան	Հայկ	10	մաթեմ.	Երևան	Ա.Շահինյանի անվ. Ֆիզմաթ հ/դ	արծաթ
7.	Դիլանյան	Վաչագան	12	մաթեմ.	Երևան	Ա.Շահինյանի անվ. Ֆիզմաթ հ/դ	բրոնզ
8.	Բաբասյան	Էրիկ	11	մաթեմ.	Երևան	Ա.Շահինյանի անվ. Ֆիզմաթ հ/դ	բրոնզ
9.	Հովհաննիսյան	Վահագն	10	մաթեմ.	Երևան	Ա.Շահինյանի անվ. Ֆիզմաթ հ/դ	բրոնզ
10.	Չթչյան	Տիգրան	12	մաթեմ.	Երևան	Ա.Շահինյանի անվ. Ֆիզմաթ հ/դ	մասնակից